Անդ գայ ի լեր ինձ Հայազգուոյն անուահանջ,
Անդ Հայաստան այլ մի՛ ասցէ խղճատանջ,
Եւ Հայուհիք, մարք վեհ որդւոց և թոռանց
Փառս յղեսցեն նոր Կաղանդին և յԱստուած։
Ուրեմն ի յայս տօն ամանոր, եկ մաղթեմք
Հայոյն ուսումն, Հայոյն սէր և բարի դէպք —
Ուսումն միայն առնէ ըղՀայն մեծարու,
Թող 'պա ուսմամբ զպարտիս Հայոյն ճանաչեմք։
Մի մանկտւոյն ձօնցես զարծաթ կամ՝ զոսկի
Ըստ վաղաբնոյթ սովորութեան Հայ ազգի —
Տուր Նոցա սիրտ, նախանձ բարի, սէր Մասեաց
Ցորս ոսկէհուռս արձանասցի քո Տարի։
Անուս մանկտին պարզիկ քան զգառն և տխմար,
Բայց յի՞նչ զմայլի բուծն ի յէակս հրաշափառ —
—Թող գիտասցէ նա ճառ կարդալ ի քո դամբան
Առաւել քան զմայել, վայել, լալ գոռալ։

Ա. Ղ. ԴԱՒՐԻԺԵՑԻ.

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՂԱՐ.

Յակոբ Վրահանայն Տէր — Աւետիքեանց՝ որ յամէն 1871 զբկեցաւ ի Վ. Ի-զարակրութենէ, ըստ թախանձադին և մեղայական խնդրանացն՝ կրկին արժանացաւ ընդունել զՎ. Էջեր և առաքեցաւ ի Մ՝իաբանակցութիւն ի Ս. Կարապետի Վ. անսն Երնջակու։

ՉԱՑՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՀԱՆԴԷՍԻ.

Պաշտօնական գործով ի Ստամբէլ վանուց գալով սուրբ Էջմիածին, և մինչ ցաւարտիլ գործոցը՝ չնորհ ունեցայ մի ամսաչափ մնալ Մայր Աթոռոյս մէջ, բայց և այնպէս չեմ՝ կարող անտարբեր և անուշադիր անցնել առանց գրաւոր արտայայտութեան մի քանի անկողմնասէր նկատողութիւններ ի գիտութիւն սիրելի Ազգայնոց, որոց մասին խոնարհաբար կենդրեմ՝ ազգասէր Ամսագրոյդ էջերուն մէջ հիւրընկալութիւն։

Ճշմարտութիւնը թէ ի գրունս թագաւորաց և թէ ի խրճիթս ազքատաց ամենայն ժամանակ հզօր և յաղթական խոստովանած է, ապա ուրեմն ամենայն զգայուն և բանական մարդոյ վերայ անհրաժեշտ հարկ կայ խօսել զայն աղատ վստահութեամբ ամենայն տեղ առանց ակնածութեան. փոյթ չէ, եթէ ոմանք զրաղատ ամբաստանութիւններով և անհեթեթ խօսքերով յարձակուելով կաշխատեն դիմակել նորա համատարած լուսոյ ճառագայթները, այնպիսի անձինք իւրեանց հոգևոր և մտաւոր զգայարանքներն նախանձու և ատելութեամբ թմբեցնելով անզգայացած են, և ոչ երբէք կարող են նոքա ունենալ արդար և ուղիղ հայեցողութիւն որևիցէ ճշմարիտ առարկայի վերայ։

Շարունակենք խօսքերս։

Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Եկեղեցին իւր զոյութեան և զրութեան մէջ ի սկզբանէ ցայսօր ժամանակի անդրդուելի պահպանուել է գլխաւորապէս վանականաց զրութեամբ և վանա-